



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻՂՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ

« 17 » \_\_\_\_\_ 05 \_\_\_\_\_ 2021թ.

№ 08/ԼԱ/ - 332

2021թ. մայիսի 10-16-ը դիտված հիդրոոդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում

Մայիսի 10-ի գիշերը ողջ հանրապետությունում դիտվել է անձրև և ամպրոպ, առանձին շրջաններում՝ ինտենսիվ: Մայիսի 13-16-ին առանձին շրջաններում դիտվել է թույլ անձրև և ամպրոպ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Հրազդանում, Սեմյոնովկայում՝ 28-29մմ, Իջևանում, Սևանում, Ֆանտանում՝ 20մմ, Ճամբարակում, Դիլիջանում, Ապարան լճայինում՝ 18-19մմ, մնացած շրջաններում 5-16մմ քանակությամբ: Մայիսի 12-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը մայիսի 10-11-ին նորմայից ցածր է եղել 2-5, 12-13-ին բարձր է եղել՝ 2-4, 14-16-ին բարձր՝ 4-6 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Արարատյան դաշտում՝ +31...+32°C, Սյունիքի հովիտներում, Արագածոտնի, Վայոց Ձորի նախալեռներում՝ +28...+32°C, Տավուշում՝ +25...+29°C, Լոռիում, Կոտայքի նախալեռներում, Սյունիքի նախալեռներում՝ +22...+27°C, Շիրակում, Կոտայքի, Վայոց Ձորի և Արագածոտնի լեռներում՝ +21...+26, Գեղարքունիքում +17...+22 աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է Շիրակում, Արագածոտնի լեռներում, Գեղարքունիքում, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում՝ -3...+2°C (Աշոցքում՝ -6°C), Տավուշում, Արագածոտնի, Կոտայքի և Սյունիքի նախալեռներում՝ +2...+5°C (Դիլիջանում՝ +1°C), Վայոց Ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ +5...+10°C (Արմավիրում՝ +3°C) աստիճան տաքություն:

Մայիսի 10-ին Գորիսում դիտվել է կարկուտ (տրամագիծ՝ 0,8մմ):

Մայիսի 17-ի դրությամբ ծյան ծածկը պահպանվում է 2500մ-ից բարձր հատվածներում:

Շաբաթվա ընթացքում շարունակել է գյուղատնտեսական մշակաբույսերի աճի և զարգացման համար անհրաժեշտ միջոցառումները: Լեռնային շրջաններում սկսվել է կարտոֆիլի տնկման աշխատանքները, նախալեռնային շրջաններում այն ձել է, կատարվել է եգիպտացորենի ցանք, առաջացել է աշնանացան ցորենի ծեղացողունի ներքին հանգույցները, Մարտունիում՝ երրորդ տերևը, հովտային շրջաններում այն հասկակալել է: Առանձին լեռնային շրջաններում հնդավորները ծաղկել են,

նախալեռնային շրջաններում դիտվել ծաղկման վերջը, սկսվել է պտղատուների պտղի ձևավորումը:

Արտաշատում ձմերուկը ծլել է, Մեղրիում դիտվել է խաղողի վազի ծաղկում:

Ուրցաձորում թրթուռները վնասել են առվույտը, որի պատճառով բազմամյա միջին արժեքներից շուտ կատարվել է առաջին հունձ:

Մայիսի 10-ին հանրապետության գետերում դիտվել է ջրի ելքերի մեծացում, մայիսի 11-13-ին՝ դիտվել է ջրի ելքերի նվազում, մայիսի 14-16-ին՝ հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել, առանձին գետերում դիտվել է ջրի ելքերի նվազում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 5 սմ-ով (09.05-16.05.2021թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.85մ (16.05.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 15 սմ-ով:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար



Լ.Ազիզյան

Տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյան  
Հեռ.՝ 012 31 79 29